https://doi.org/10.46991/hc.2025.22.1.055

Western-Armenian Periodical Press on Swiss National Movements in the 1840s

Feliks Movsisyan
https://orcid.org/0000-0001-7576-9672
Vanadzor State University, Doctor of Historical Sciences, Professor
history.vsu@gmail.com

Keywords: Switzerland, Sonderbund, civil war, constitution, confederation, Armenian periodical press.

The Canton movement in Switzerland in the 1840s attracted the attention of the Armenian periodical press of that time. The newspapers "Arshaluys Araratyan", "Hayastan" and "Europa", the ideologues of the Western-Armenian national conservative current, elucidated that movement immediately. The political weekly of the Mkhitaryan Congregation of Vienna considered the Swiss national movement to be "internal confusions" created by the influence of the July Revolution of 1830, as well as by the propaganda of the radicals. According to the weekly, the radical Cantons were eager to overthrow the existing authorities and establish a republican order. The Congregation members were supporters of the monarchical order recognized in Europe by the Vienna Congress of 1815, so they called the struggle of the Cantons just "a riot". The Catholic congregants also emphasized the religious component in the Canton movement and complained that violence was being used against the church and monasteries were being closed. "The Arshaluys Araratyan" doubted that the rebellious mountain Cantons would succeed. The weekly didn't openly express its position on the struggle of the Cantons and was content to express a vague opinion with the publications of its ideologue European press. "The Hayastan", the official newspaper of the Armenian Patriarchate of Constantinople, also ignored the religious component of the Canton movement, though it preferred to report on it merely as an impartial "historiographer".

Արևմտահայ պարբերական մամուլը 1840-ական թթ. Շվեյցարիայում ազգային շարժումների մասին

Ֆելիքս Մովսիսյան
Վանաձորի պետական համալսարան, պ. գ. դ., պրոֆեսոր

History and Culture Vol.-22 (1), 2025, pp. 55-67

Received: 14.06.2025
Revised: 17.08.2025
Accepted: 15.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author[s] 2025

Western-Armenian Periodical Press on Swiss National Movements in the 1840s

Արևմտահայ պարբերական մամուլը 1840-ական թթ. Շվեյցարիայում ազգային շարժումների մասին

Հիմնաբառեր՝ Շվեյցարիա, Զոնդերբունդ,
քաղաքացիական պատերազմ, սահմանադրություն,
համադաշնություն, հայ պարբերական մամուլ:

1840-ական թվականներին Շվեյցարիայում ծավալված կանտոնային շարժումը չվրիպեց ժամանակի հայ պարբերական մամուլի ուշադրությունից: Դրան անմիջականորեն անդրադարձան արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքի գաղափարակիր «Արշալույս Արարատյան», «Հայաստան» ու «Եվրոպա» թերթերը: Վիեննայի Մխիթարյանների «Եվրոպա» քաղաքական շաբաթաթերթը շվեյցարական ազգային շարժումը բնորոշում էր որպես «ներքին շփոթություններ», որոնք պայմանավորված էին 1830 թ. հուլիսյան հեղափոխության ու արմատականների քարոզչության ազդեցությամբ: Ըստ թերթի՝ արմատական կանտոնները ցանկանում էին գործող իշխանությունները տապալել ու հանրապետական կարգեր հաստատել: Մխիթարյանները 1815 թ. Վիեննայի դաշնագրությամբ Եվրոպայում ճանաչված միապետական կարգերի կողմնակիցներ էին, ուստի կանտոնների պայքարն անվանում էին «խռովություն»: Կաթոլիկ Մխիթարյանները կանտոնային շարժման մեջ կարևորում էին նաև կրոնական խնդիրը՝ դժգոհելով, որ բռնությունների են կիրառվում եկեղեցու դեմ, փակվում են վանքերը: «Արշալույս Արարատյանը» վստահ չէր, որ խռովարար լեռնային կանտոնները հաջողության կհասնեին: Թերթը կանտոնների պայքարի մասին իր դիրքորոշումը բացահայտ չէր արտահայտում. բավարարվում էր քողարկված կարծիք արտահայտել իր գաղափարակից եվրոպական մամուլի հրապարակումներով: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի «Հայաստան» պաշտոնաթերթը նույնպես չէր անտեսում կանտոնային շարժման մեջ կրոնական պարը, բայց գերադասատում էր այդ մասին պատմել սոսկ «որպես պատմիչ»:

Западноармянская периодическая печать о национальных движениях в Швейцарии в 1840-х гг

Феликс Мовсисян
Ванадзорский государственный университет, доктор исторических наук, профессор

Ключевые слова: Швейцария, Зондербунд, гражданская война,
конституция, конфедерация,
армянская периодическая печать.

Кантонное движение в Швейцарии в 1840-х годах не ускользнуло от внимания армянской периодической печати того времени. На это движение непосредственно реагировалиВыразители западноармянского национально-консервативного течения газеты: «АршалуйсАрараТян», «Айастан» и «Европа». Политический еженедельник венских Мхитаристов «Европа» считал швейцарское национальное движение «внутренней смутой», вызванной Июльской революцией 1830 года и пропагандой радикалов. По данным газеты, радикальные кантоны хотели свергнуть существующую

власть и установить республиканский строй. Мхитаристы были сторонниками монархического строя, установленного в Европе Венским конгрессом от 1815 года, поэтому борьбу кантонов они называли «бунтом». Мхитаристы-католики подчеркивали также религиозный вопрос в кантонном движении и возмущались, что против церкви применяется насилие и закрываются монастыри. Периодическое издание «АршалуйсАрараторян» не было уверено, что восставшие горные кантоны добьются успеха. Газета не выражала открыто своей позиции по борьбе кантонов и довольствовалась выражением своего завуалированного мнения на основе публикаций европейской прессы. Официальная газета Армянского Константинопольского Патриархата «Айастан» также не игнорировала религиозный элемент в кантонном движении, но предпочитала рассказывать о нем лишь как беспристрастный «историограф».

* * *

Ներածություն: 1815 թ. մարտ 20-ին Վիեննայի վեհաժողովը որոշեց Շվեյցարիայի նոր սահմանները և պետության ներքին կառուցվածքը: Քսաներկու «ազատ, անկախ և չեզոք» միութենական կանտոններից կազմված Շվեյցարիան կրկին դարձավ համադաշնություն, որի անկախությունն ու «հավերժ չեզոքությունը» երաշխավորվեցին եվրոպական առաջատար ութ պետությունները: 1815 թ. օգոստոսի 7-ին ընդունված սահմանադրության համաձայն, յուրաքանչյուր կանտոն պահպանում էր իր անկախությունը, ուներ կառավարություն, բանակ, փոստ, դրամ, մաքսատուն, կարող էր ինքնուրույն առևտուր անել այլ պետությունների հետ: Կանտոնների քաղաքական կյանքը չափազանց խայտաբղետ էր, համադաշնության բնակիչները քաղաքացիական լայն իրավունքներ չունեին [Зак, 1966, 291-292; История XIX века, 1938, 60]: 1830-1847 թթ. լիբերալ մտավորականության քարոզչության ազդեցության տակ կանտոնային շարժում սկսվեց երկրի քաղաքական կառուցվածքի ազատականացման ու կենտրոնացման համար: Այն համաեվրոպական հնչեղություն ու նշանակություն ձեռք չբերեց, բայց և այնպես իր վրա սևեռեց ժամանակի հայ պարբերական մամուլի ուշադրությունը: Կանտոնային շարժմանն իրենց հրապարակումներում անդրադարձան արևմտահայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող «Արշալույս արարատյան», «Հայաստան» և «Եվրոպա» թերթերը, որոնց դիրքորոշումը հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի պատմության մեջ առաջին անգամ ներկայացվում է սույն հոդվածում:

«Արշալույս Արարատյան» թերթը: 1840 թ. սկսած Զմյուռնիայում լույս տեսած «Արշալույս արարատյան» քաղաքական ու բանասիրական թերթը սկզբում իր հնարավորությունների սահմանում աղոտ լուսավորում էր հայոց աշխարհը, բայց «ժամանակի ընթացքում հետզհետե պայծառացավ» և իրավամբ դարձավ «ճշմարիտ արշալույսը հայ լրագրության» [Գալէմքեարեան, 1893, 52]: Թերթը միաժամանակ ակտիվ արձագանքում էր եվրոպական երկրներում տեղի ունեցող քաղաքական կարևորագույն իրադարձություններին: «Արշալույս Արարատյանը» երկփեղկված դիրքորոշում ուներ եվրոպական ժողովուրդների ազգային ու ազատագրական շարժումներին, որոնցից իտալացիների ու հունգարացիների ազատագրական պայքարին վերաբերում էր համակրանքով, իսկ մյուսների պայքարը լուսաբանում էր անկողմնակալ դիրքերից:

«Հայաստան» թերթը: 1846-1852 թթ. Կ.Պոլսում լույս տեսած հայոց պատրիարքարանի «Հայաստան» պաշտոնաթերթը ազգային լուրեր, գրական ու բանասիրական նյութեր տպագրելուց զատ, կարևորում էր նաև եվրոպական երկրներում ընթացող հեղափոխական և ազգային-

ազատագրական շարժումների լուսաբանումը: Թերթի խմբագիր Հովհաննես Չամուռճյան Տերոյենցը Օսմանյան «բարեխնամ և մեծազոր տերության» ու եվրոպական միապետական կարգերի պահպանման կողմնակից էր: Նա քննադատում էր հեղափոխական ու ազգային-ազատագրական ցանկացած շարժում, որոնց մասնակիցներին անվանում էր «խռովարարներ», իսկ պայքարի ելած ժողովրդին՝ «հովէ քշուած փետուր» [Հայաստան, 03.7.1848, 106]:

«Եվրոպա» շաբաթաթերթը: Վիեննայի Մխիթարյանների «Եվրոպա» շաբաթաթերթը ամենայն մանրամասնությամբ և հետևողականորեն լուսաբանում էր 1840-ական թթ. վերջերին եվրոպական երկրներում տեղի ունեցած հեղափոխական, ազգային և ազատագրական բոլոր շարժումները: Պարբերականի խմբագիրներն ու լրագրողները հավատարիմ մնացին քաղաքական լուրերը «ծանրությամբ, հանդարտությամբ, ընտրությամբ և կարելի եղածին չափ մաքուր ոճով» [Գալէմքեարեան, 1893,100] գրելու պատգամին: Նրանք պարտավորվում էին եվրոպական «խռովութիւնները իրենց բնական՝ աղէկ կամ գէշ գունով նկատել» [«Եվրոպա», 27.06.1848, 26, 112], ստացված լուրերը ներկայացնել անկողմնակալ ու անաչառ քաղաքական լրագիր հրատարակել:

1840-ական թթ. ազգային շարժումները Շվեյցարիայում: 1830 թ. հուլիսյան հեղափոխության ազդեցության տակ շվեյցարական համադաշնության գրեթե բոլոր կանտոններում ժողովրդական շարժումներ տեղի ունեցան միութենական պայմանագիրը վերանայելու և կենտրոնացված պետություն ստեղծելու նպատակով, բայց հաջողության չհասան: 1840-ական թթ. սկզբին կաթոլիկ հոգևորականության օգնությամբ ամբողջ Շվեյցարիան ծածկվեց դավադրությունների ցանցով: 1845 թ. լիբերալների հակառակորդ ճիզվիտների գաղտնի ջոկատներն արշավեցին Լյուցեռնի վրա, 100 մարդ սպանվեց, 1800-ը՝ գերի ընկան: 1845 թ. դեկտեմբերին լեռնային Լյուցեռն, Ուրի, Շվից, Ունտերվալդեն, Ցուգ, Ֆրիբուր և Վալե [Վալլիս] կանտոններում ստեղծվեց գաղտնի ռազմաքաղաքական, կաթոլիկական պաշտպանական «Զոնդերբունդ» միություն, որը ձեռնամուխ եղավ քաղաքացիական պատերազմի նախապատրաստության և գաղտնի ստեղծեց 30 հազար բանակ:

1845 թ. փետրվարից մինչև 1846 թ. հոկտեմբերը Վոյում, Բեռնում ու Ժնևում իշխանության եկան արմատականները: 1847 թ. մայիսին լիբերալներն ու արմատականները Սանկտ Գալլենում հաղթանակ տարան ընտրություններում ու 13 տեղ ստացան տագգատցունգում: Խորհրդարանում կազմելով մեծամասնություն, նրանք 1847 թ. հուլիսի 20-ին «Զոնդերբունդի» գոյությունն ու ռազմական նախապատրաստությունները հայտարարեցին անհամատեղելի 1815 թ. համադաշնության պայմանագրի պայմանների հետ ու որոշեցին ցրել այն: Խռովարար կանտոնները դրան պատասխանեցին վճռական մերժումով: Սեպտեմբերի 3-ին ճիզվիտների ներկայությունն արգելվեց Շվեյցարիայում, որով ներքին պատերազմը դարձավ անխուսափելի [Фолькер, 2013, 91; Дебидур, 1995, 408]:

Շվեյցարիայում ծավալված այս իրադարձություններին անդրադարձած արևմտահայ պարբերականներից «Արշալույս Արարատյանը» գրում էր, որ շվեյցարական համադաշնության ընդհանուր խորհրդարանը երկրում «բարեկարգություններ հաստատելու» ջանքեր էր գործադրում ու որոշել էր հիսուսյան կրոնավորներին երկրից դուրս հանել: Դա առաջ է բերել կաթոլիկ կանտոնների դժգոհությունը, որոնք պատերազմի նախապատրաստություններ են տեսնում: Թերթի կարծիքով ըմբոստացած 7 կանտոններն առանց օտար տերությունների օգնության

հաղթելու հնարավորություն չունեն, քանի որ մնացած կանտոններին զիջում են բնակչության թվով ու ռեսուրսների քանակով [Արշալույս արարատյան, 19.09.1847, 294]:

Մխիթարյանների «Եվրոպա» շաբաթաթերթը կանտոնների հակամարտությունը ներկայացնում է՝ հղում անելով Լյուցեռն կանտոնի մեծ խորհրդի նախագահ Մայերին: Նա Շվեյցարիայում տիրող վիճակը գնահատում էր «թշվառ», քանի որ Լյուցեռնում «մրրիկները դեռ չփարատած», Ժնևում բռնկված ապստամբությունը «օրինաց կարգը տակն ու վրա արավ»: Ֆրայբուրգում կառավարությունը, բարեբախտաբար, ապստամբությունը զսպեց, բայց դրան հակառակ Սանտ Գալլեն կանտոնում արմատականների «հաղթությունից շատ չարիք պիտի որ հետևի», որին հարկավոր է հակադրել «իրավանց ու դաշնակցության օրենքներուն ճամբան»:

«Եվրոպան» Մայերի խոսքը տպագրում էր առանց մեկնաբանության, բայց թղթակցության տողատակում ընթերցողներին բացատրում էր, որ արմատականներն այն մարդիկ են, «որոնք որ ամեն բան տակն ու վրա ընել, կործանել ու նորեն ուզածներուն պես կարգ ու կանոն դնել կուզեն» [Եվրոպա, 13.07.1847, 3, 11]: Թերթի դիտարկումը հիմնավոր չէր, քանի որ լեռնային յոթ կանտոններն արտահայտում էին ավատատիրական ազնվականության շահերը և խոչընդոտում էին միասնական կենտրոնացված պետության կայացմանը, ինչին ձգտում էին արմատականները: «Եվրոպան» անտեսեց այն իրողությունը, որ լեռնային կանտոնների պայքարն անջատողական էր և խաթարում էր երկրի միասնությունը: Թերթի խմբագիրները հակամարտող կանտոնների պայքարը դիտարկում էին ոչ թե սոցիալ-տնտեսական ու քաղաքական լուրջ հակասությունների, այլ դավանական-կրոնական տեսանկյունից: Նրանք կաթոլիկներով բնակեցված յոթ նահանգները ներկայացնում էին «ուղղափառ ... և արմատական նահանգներ», որոնք «իրենք զիրենք պաշտ-պանելու համար» հակադրվել են մնացած կանտոններին: Մխիթարյանների բնութագրմամբ արմատականները «խռովություն հանելու առիթ կը փնտռեն» և լեռնային կանտոնների «իրենց դեմ պատերազմի գրգռությունը… դաշնակցութեան օրենքներուն ալ հակառակ հրատարակելով» դաշնության օրենսդիր ժողովում յոթ նահանգներին պատերազմի նախապատրաստությունները դադարեցնելու զանազան առաջարկություններ արեցին: «Եվրոպան» ներկայացնում էր դրանք, պատմում 1847 թ. օգոստոսին օրենսդիր ժողովի նիստերում այդ առաջարկությունների շուրջը կայացած քննարկումների մասին: Մխիթարյանները հակադրվում էին անգլիական «Մորինգ քրոնիքլ» թերթին, որի կարծիքով արմատական կանտոններն իրենք իրենց պաշտպանելու համար «զենք առած ու իրարու հետ միաբանած են» և ձգտում են Շվեյցարիան «հասարակապետութիւն դարձնել»: Թերթը խորհուրդ էր տալիս պաշտպանելու այն ուժերին, որոնք հանդես էին գալիս Շվեյցարական Համադաշնությունը «մեկ առանձին ու միացեալ հասարակապետութեան փոխելու դիտավորութեամբ» [Եվրոպա, 14.09.1847, 12, 46]:

Մխիթարյանները զարմանում էին, որ «այսպիսի անպիտան խորհուրդ էր տալիս» Անգլիայի արտաքին գործերի նախարարության պաշտոնաթերթը: Նրանց համար անհասկանալի էր, թե ինչպես կարող էր միապետական իշխանություն ներկայացնող պաշտոնական լրատվամիջոցը հանդես գալ շվեյցարական արմատականներին սատարող խորհուրդ տալով: Մխիթարյանների կարծիքով 1815 թ. Վիեննայի վեհաժողովի կողմից ճանաչված շվեյցարական համադաշնությունը կարող էր իր «քաղաքական կերպը» փոխել միայն բոլոր կանտոնների համաձայնության դեպքում: Նրանց կարծիքով մեծամասնություն կազմող արմատական կանտոնները, իրավական տեսանկյունից ելնելով, չէին կարող իրենց կամքը «բռնութեամբ պարտադրել լեռնային

կանտոններին» ու ստիպել փոխել պետության ներքին կառուցվածքը: Դա արդարացի կլիներ միայն այն դեպքում, երբ 22 կանտոններից յուրաքանչյուրը հավանություն տար, որ «նոր դաշնավորութեան դաշինք մը շինուի»:

«Եվրոպայի» խմբագիրները ճիշտ չէին ընկալում Շվեյցարիայում կատարվածը: Իրականում երկրի խորհրդարանը ձգտում էր պահպանել համադաշնության տարածքային ամբողջականությունը, առաջարկում էր հավատարիմ մնալ 1815 թ. միութենական դաշինքին, ցրել «Զոնդերբունդը» և դադարեցնել պատերազմական նախապատրաստությունները, բայց վճռական մերժում ստացավ: Դրա արդյունքում 1847 թ. նոյեմբերին երկրում քաղաքացիական պատերազմ սկսվեց:

«Եվրոպան» պատմում էր ՍանկտԳալլեն, Շաֆֆհաուզեն, Ցուգ, Ուրի կանտոններում հոկտեմբերին նահանգային ժողովներում կայացած քննարկումների մասին, որտեղ որոշվեց պատերազմական նախապատրաստությունները չդադարեցնել: Թերթը, աղավաղելով իրականությունը, տեղի ունեցածն այնպես է ներկայացնում, թե իբր լեռնային կանտոններն իրենց պաշտպանելու համար հարկադրված են «Աստուծոյ օգնութեանը ապավինելով բռնութիւնը բռնութեամբ վանելու պատրաստվիլ»: Ըստ «Եվրոպայի»՝ լեռնային նահանգների կառավարիչները պատերազմի հարցը ժողովի քննարկմանն են դրել և ժողովրդի «կամքը իմանալ կուզեն», մինչդեռ արմատականների ղեկավարներն ինքնակամ որոշում են կայացրել: Դա արմատական նահանգներում առաջ էր բերել թե՛ ուղղափառների և թե՛ բողոքականների դժգոհությունը: Այնպես որ, եզրակացնում է թերթը, հազիվ թե «արմատականները ուզածնին կարող ըլլան առաջ տանիլ» [«Եվրոպա», 19.10.1847, 17, 66]:

«Արշալույս Արարատյանի» դիտարկմամբ միավորված կաթոլիկ 7 կանտոնները, ինչպես երևում է, պետք է կատարեին խորհրդարանի որոշումը և հիսուսական կրոնավորներին երկրից դուրս հանեն: Թերթի կարծիքով դա դժվար թե տեղի ունենար «առանց պատերազմի և արյունահեղության», քանի որ այդ կրոնավորների ազդեցությունը «խիստ մեծ է հռովմէադավան նահանգաց մէջ» [«Արշալույս Արարատյան», 31.10.1847, 297]: «Արշալույս Արարատյանի» կանխատեսումն իրականացավ, Շվեյցարիայում քաղաքացիական պատերազմ սկսվեց, որը տևեց ընդամենը 29 օր: «Զոնդերբունդը» հույսը դրել էր եվրոպական պետությունների օգնության, խորհրդարանի թուլության ու լեռնային վայրերում պաշտպանություն իրականացնելու վրա: Բայց այդ հաշվարկը ճիշտ դուրս չեկավ, քանի որ ժողովուրդը պաշտպանեց երկրի միավորման համար պայքարը, ստեղծվեց 100 հազար բանակ: Ֆրանսիան ու Ավստրիան, մտահոգվելով, որ իրենց երկրում հեղափոխություն կսկսվի, բավարարվեցին Շվեյցարիա միայն զենք ուղարկելով: Տնտեսապես թույլ, հետամնաց ու սակավ բնակեցված լեռնային կանտոնները չկարողացան դիմադրություն ցույց տալ իրենց զինուժին գրեթե երկու անգամ գերակշռող արմատական կանտոններին: «Զոնդերբունդը» քայքայվեց, և բոլոր խռովարար կանտոններն անձնատուր եղան [«Фолькер», 2013, 93]:

«Արշալույս Արարատյանը» կարևորում էր դաշնային ժողովի ջանքերը, որը «եղբայրասիրական միջոցները ի գործ դրավ խաղաղութեանը, այս մեծագին բարիքը ազգաց, հաստատուն պահելու համար հասարակաց հայրենեաց մէջ» և յոթ կանտոններին պարտավորեցրեց զենքը ցած դնել: Գնդապետ Դյուֆուրը ճնշեց խռովարար կանտոնների անհնազանդությունը ու նրանց նկատմամբ

«մարդասիրական գթություն և խոհեմություն» դրսևորեց, որով պատերազմներին բնութագրական «արյունահեղութիւնները, բռնութիւնները և անկարգութիւնները չափավորեցան» [«Արշալույս Արարատյան», 14.11.1847, 298; 28.11.1847, 299; 12.12.1847, 300]:

1847 թ. հոկտեմբերի 24-ին ժնևցի գեներալ Գիյոմ-Անրի Դյուֆուրը թվական գերակշռություն ունեցող զորքով շարժվեց խռովարար կանտոնների վրա և խուսափելով մեծ կորուստներից՝ նոյեմբերի 24-ին ստիպեց անձնատուր լինել Ֆրիբուրգին ու Լյուցեռնին: Նրա հաղթանակը համադաշնությունում չհանգեցրեց ո՛չ քաղաքական և ո՛չ էլ դավանաբանական հաշտության, որովհետև պարտություն կրած ու նվաստացած կաթոլիկ կանտոնները Շվեյցարական Համադաշնությունում ինտեգրման բավական դանդաղ ճանապարհ անցան [«Фолькер», 2013, 93]:

«Հայաստանը» պատմում էր, որ Ֆրիբուրգի անձնատուր լինելուց հետո 31 մարդ աքսորվեց, շատերը 6 տարի ժամանակով զրկվեցին քաղաքացիական իրավունքներից, իսկ կանտոնի վրա մեկ միլիոն 200 հազար շվեյցարական ֆրանկ տուգանք դրվեց: Իշխանության եկած արմատականների կառավարությունը «անամոթ հեգնությամբ» հայտարարեց, որ «օրինավոր կառավարութեան տեղը պիտի բռնեն մինչև ինն տարի» [«Հայաստան», 06.03.1848, 89, 3]:

«Եվրոպայի» տեղեկություններով՝ կենտրոնական կառավարությունը լեռնային կանտոնների նկատմամբ հաղթանակ տանելուց հետո նրանց վրա հինգ մլն ֆրանկ ռազմատուգանք սահմանեց՝ պատերազմի վնասները փոխհատուցելու նպատակով: Երեք հարյուր հազար ֆրանկի տուգանք դրվեց ոչ լեռնային Նեվշատել կանտոնի վրա, որը հրաժարվել էր մասնակցել պատերազմին: Մխիթարյաններն այս հարցում էլ կարևորում են կրոնական գործոնը՝ ընդգծելով, որ Լյուցեռնի, Ֆրայբուրգի ու Վալլիսի կառավարություններն իրենց վրա դրված տուգանքը վճարելու համար «եկեղեցականաց դեմ սաստիկ բռնութիւն կընեն ու այս ստակին մեծ մասն վանքերեն, եպիսկոպոսներեն ու քահանաներեն հանել կուզեն»: Վալլիսի նահանգում 190 հազար ֆրանկ տուգանք դրվեց եկեղեցականների վրա: Սուրբ Բեռնարդոսի վանքը չկարողացավ վճարել 80 հազար ֆրանկ տուգանքը, ենթարկվեց թալանի և 900 տարի շարունակ գործելուց հետո փակվեց, որը «նույնիսկ բողոքականներուն սիրտը ցավով կլեցընեն»: «Արմատականներուն չարութեան» հետևանքով նույն ճակատագրին արժանացավ նաև Բոր-Տիես վանքը: Մխիթարյանները, չթաքցնելով իրենց վրդովմունքը կատարվածի կապակցությամբ, գրում էին. «Այս է ահավասիկ վարձքը, որ նոր արմատականները մարդկութեան համար աշխատողներուն կուտան [«Եվրոպա», 26.12.1847, 27, 107; 25.01.1848, 4, 13; 01.02.1848, 5, 19]:

«Հայաստանը» Սուրբ Բեռնարդոսի ու Բոր-Տիես վանքերի նկատմամբ իրականացրած բռնությունը համարեց «այսօրինակ կողոպուտ», որը Եվրոպայում վերջին անգամ տեղի է ունեցել 1793 թ. «ֆրանսիական խռովութեան ատենը»: Թերթը նկատի ունի XVIII դարի ֆրանսիական հեղափոխության տարիներին յակոբինականների իրականացրած բռնությունները եկեղեցու նկատմամբ: Սրանով, եզրակացնում է թերթը, ամբողջ աշխարհը տեսնում է, որ Շվեյցարիայում «ազատութիւնն ու արդարութիւնը դուրս վռնդված են» [«Հայաստան», 06.03.1848, 89]:

Մխիթարյանները տպագրեցին Հռոմի պապի նվիրակի բողոքը, ըստ որի՝ Պիոս IX պապը «արտասուալից աչուրներով կծանուցանե» իր դժգոհությունը համադաշնության զինվորների գործողությունների նկատմամբ, որոնք մի քանի «եկեղեցիներուն մեջ հայհոյութիւններ ու սեղանակապտութիւններ գործելու հանդգներ են»: Որպես համակողմանի լրատվություն տվող քաղաքական թերթ՝ «Եվրոպայի» խմբագիրները միաժամանակ ներկայացնում են Ֆրանսիայի,

Ավստրիայի ու Ռուսաստանի հունվարի 19-ի հայտարարությունները, ըստ որոնց՝ հանդես էին գալիս Շվեյցարիայի ինքնիշխանության ու միասնության պահպանման օգտին: Նրանք զետեղեցին ֆրանսիական խորհրդարանի քննարկումները Շվեյցարիայում տիրող վիճակի մասին ու մի շարք պատգամավորների ելույթները: Թերթի գնահատմամբ՝ ֆրանսիական խորհրդարանի պատգամավոր Ադոլֆ Թիերը փորձում էր արդարացնել շվեյցարական արմատականներին, բայց կառավարության ղեկավար Ֆրանսուա Գիզոն հանդես եկավ Ա. Թիերի «ծուռ կարծեաց դեմ», դատապարտեց «ամեն բռնութիւններն թե՛ կրոնի և թե՛ քաղաքական ընկերութիւնների դեմ արած անիրավութիւնները պայծառ լուսավորութեան մեջ դրավ»: Նա միաժամանակ խնդիր դրեց Եվրոպան «այն մեծ խռովութենեն ազատենք», որ Շվեյցարիայի արմատականներն «իրենց վախճան դրած են» [«Եվրոպա», 08.02.1848, 6, 22; 22.02.1848, 8, 30-31]: «Եվրոպան» ճիշտ է ներկայացնում Ֆ. Գիզոյի դիրքորոշումը, որը Կ. Մետտեռնիխի նման աջակցում էր «Զոնդերբունդին» ու ճիզվիտներին: Նա գտնում էր, որ Շվեյցարիան իրավունք չունի առանց մեծ տերությունների համաձայնության փոխելու 1815 թ. օգոստոսի 7-ի սահմանադրությունը [Дебидур, 1995, 407]: Սրանով Մխիթարյանները փորձում էին ցույց տալ, որ կատարվածն ամենևին էլ շվեյցարական երևույթ չէ ու պետք է զգաստացնի եվրոպական կառավարություններին, քանզի արմատականները ցանկացած երկրում կարող են անօրինականություններ կատարել:

Հայ պարբերականները կարևորում էին եվրոպական պետությունների դիրքորոշումը Շվեյցարիայում կատարվող դեպքերի կապակցությամբ: «Եվրոպայի» պատմելով՝ Շվեյցարիայում Անգլիայի դեսպան Սթրեթֆորդ Քեննիգը արմատականներին ներկայացրած հուշագրում հորդորում էր «հանդարտության», ուստի շատ արագ նրանց հաճելի չեղավ: «Արշալույս Արարատյանը» տպագրեց Բեռնի լրագրի հոդվածը, որը, Անգլիայի ու շվեյցարական իշխանությունների «մտերմական բարեկամությունը» շեշտելով, կարծիք էր հայտնում, թե «նոր շփոթութիւն կամ գլխավոր դժվարութիւն չեն պատահիր, այլ մանավանդ խաղաղութիւնը և ազատութիւնը իրենց մեծագին բարիքը կտարածեն այս պզտիկ և քաջ ազգին վրա» [«Արշալույս Արարատյան», 09.01.1848, 302]: Անդրադառնալով Ֆրանսիայի, Ռուսաստանի և Ավստրիայի 1848 թ. հունվարի 19-ի հայտարարություններին՝ «Արշալույս Արարատյանը» նշում էր, որ այս տերությունների և դեսպան Ս. Քեննիգի գրությունների տարբերությունն այն է, որ Անգլիայի կառավարությունը «կընդունի թե ընդհանուր դաշնավորութիւնը իրավունք ուներ յոթ նահանգաց մասնավոր դաշնագրութիւնը կործանելու, իսկ երեք տերութիւնները հիմակու հիմա չեն ուզեր ճանաչելու այս իրավունքը»: Ըստ թերթի՝ Ս. Քեննիգը հակամարտող կողմերին խորհուրդ էր տալիս ներողամտություն դրսևորելու, վրեժխնդրություն չունենալու և «միաբանութեան կհորդորե վեհանձնաբար» [«Արշալույս Արարատյան», 06.02.1848, 304]:

Մխիթարյանները 1848 թ. սկզբում եվրոպական երկրներում ծավալված հեղափոխական շարժումների պատճառները համարում էին բնակչության աճը, անբերրիությունը, գործազրկությունը, ապրուստի միջոցների բացակայությունն ու աղքատությունը, որը մարդկանց հուսահատության է հասցրել: Միապետական կարգերի ջատագով Մխիթարյանները եվրոպական հեղափոխություններն անվանում էին «խռովություններ», իսկ նրանց մասնակիցներին՝ «խռովարար մարդիկ» ու «խաժամուժ»: Նրանք Եվրոպայում տիրող «խառնակ» վիճակի համար հանդիմանում էին նաև շվեյցարական արմատականներին, որոնք սկիզբ դրեցին զանգվածային

շարժումներին: «Եվրոպայի» այս դիտարկումը ճշմարիտ էր այնքանով, որ շվեյցարական արմատականները կարևորում էին «Զոնդերբունդի» դեմ իրենց պայքարի համաեվրոպական նշանակությունը: Նրանք հաճախ էին կրկնում, որ «քաղաքացիական պատերազմում թափած իրենց արյունը լցվեց Եվրոպայի թառամած երակները» [Революции 1848-1849гг., т. 2, 1952, 349]:

1847 թ. պատմական պայմաններում փոքրիկ Շվեյցարիայում արմատականների՝ կարճատև պատերազմում տարած հաղթանակը չէր կարող չնպաստել Եվրոպայում հեղափոխական իրադրության հասունացմանը: 1848 թ. սկզբին Ֆրանսիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Իտալիայում բռնկված հեղափոխական շարժումներն իրենց հերթին լուրջ ազդեցություն ունեցան բուն Շվեյցարիայի վրա: Դրանք թույլ չտվեցին, որ օտարերկրյա ուժերը միջամտեն Շվեյցարիայի ներքին գործերին՝ հօգուտ «Զոնդերբունդի» մեջ մտնող կանտոնների [Революции 1848-1849гг., т.2, 1952, 349; Фолькер, 2013, 93]:

Իրատեսորեն նկատելով այդ իրողությունը՝ «Եվրոպան» գրում էր, որ 1848 թ. փետրվարին Փարիզում տեղի ունեցած «խռովություններուն լուրը» Շվեյցարիա հասնելուն պես Նեվշատել նահանգի արմատականները ոտքի ելան, զինվեցին, զորքով մայրաքաղաք եկան, կառավարությունը «բռնութեամբ վար առին» և իրենց Պրուսիայի թագավորի իշխանությունից «ազատ հրատարակեցին ու հասարակապետութիւն դրին» [«Եվրոպա», 11.04.1848, 15, 63]: «Արշալույս Արարատյանը» նույնպես ընդգծում էր, որ ֆրանսիական հեղափոխության ազդեցության տակ Նեվշատել կանտոնը «առանց արյունահեղութեան զատուեցավ» Պրուսիայի տիրապետությունից և հանրապետություն հռչակեց, որն անմիջապես ճանաչեց Շվեյցարիայի ընդհանուր դաշնային ժողովը: Ստեղծվեց ժամանակավոր կառավարություն, որը մարտի 2-ին հատուկ հայտարարությամբ «այս բարեբաղդ դիպուածը ծանոյց ամէէն քաղաքացվոց» [«Արշալույս Արարատյան», 19.03.1848, 307]:

«Հայաստան» թերթի խմբագիր Հովհաննես Չամուռճյան Տերոյենցը Մխիթարյանների նման նույնպես դեմ էր հեղափոխական շարժումներին, որի մասնակիցներին անվանում էր խռովարարներ», «արգահատելի մարդիկ, որոնք փորձում էին փոխել տիրող կարգերը: Շվեյցարական կանտոնային շարժման նկատմամբ նա որոշակի անկողմնակալություն էր դրսևորում՝ դրանք ներկայացնելով «որպես պատմիչ»: «Հայաստանը» գրում էր, որ Նեվշատել կանտոնը ապստամբել էր, ժամանակավոր կառավարություն ստեղծել ու հայտարարել Պրուսիայի թագավորի իշխանությունից ազատ լինելը [«Հայաստան», 27.03.1848, 92, 3]:

«Եվրոպայի» հավաստի տեղեկությամբ Պրուսիայի տիրապետության տակ գտնվող ու դքսություն համարվող Նեվշատել կանտոնում սկսված հեղափոխական շարժումը փետրվարի 29-ին տապալեց միապետական իշխանությունը Լոկլում, Շոդե-Ֆոնում և հարակից շրջաններում ու հռչակեց հանրապետություն: Շվեյցարիայում 1848 թ. ծավալված ազգային շարժումն ընթացավ սահմանադրության մշակման կարգախոսով: Մայիսին սահմանադրության նախագիծը քննարկվեց խորհրդարանում և մինչև սեպտեմբեր ընդունվեց 22 կանտոններից 15-ում: Սահմանադրությամբ Շվեյցարիան վերածվում էր միասնական դաշնային պետության, որը պաշտոնապես կոչվեց Շվեյցարական Համադաշնություն: Իրավազուրկ խորհրդարանն իր տեղը զիջում էր երկպալատ միութենական ժողովին՝ երկրի բարձրագույն օրենսդիր մարմնին: Գործադիր բարձրագույն իշխանությունը համարվում էր Դաշնային խորհուրդը, իսկ դատական իշխանությունը՝ Գերագույն դատարանը: Պետության մայրաքաղաքը դարձավ արդյունաբերական

Բեռնը: Սահմանվեց համընդհանուր ընտրական իրավունք, խոսքի, մամուլի, տպագրության, հավատքի, ժողովների, միություններ ստեղծելու ազատություն: Վերացվեցին վանքերի արտոնությունները, ճիզվիտները ենթակա էին երկրից վտարման [Революции 1848-1849 гг., 1952, 353; «Фолькер», 2013, 94-95]:

Այս ամենին քաջատեղյակ «Եվրոպան», որևէ հետևություն չանելով այն իրողությունից, որ արմատականները պայքարում էին ճիզվիտների դեմ և ցանկանում էին վերացնել եկեղեցու արտոնությունները, շարունակում էր յուրովի արծարծել կրոնական թեման: Թերթը պատմում էր, որ Լյուցեռնի, Ֆրիբուրգի ու Վալլիսի նոր արմատական կառավարությունները «բոլոր վանքերը ջնջելու և անոնց ունեցածը առնելու կնային»: «Եվրոպան» այդ կապակցությամբ ներկայացնում էր կառավարության բացատրությունը, ըստ որի՝ եկեղեցու արտոնությունները «մեր սահմանադրութեան և կրոնի ազատութեան դեմ է, անիրավութիւն է, ամենուն և մանավանդ բոլոր ուղղափառներուն հոգին ալ կգրգռե և շատ նոր խռովութիւներու պատճառ կրնա ըլլալ» [«Եվրոպա», 11.04.1848, 15, 63]:

Մխիթարյանները հավաստի ներկայացնում էին նոր սահմանադրության հիմնական դրույթները, որոնցով Շվեյցարիայի ամբողջ տարածքում սահմանվում էր քրիստոնեական դավանանքի ազատ գործադրություն, տպագրության ազատություն, իսկ բոլոր կանտոններում՝ միասնական դատական համակարգ: Թերթն ընդգծում էր, որ սահմանադրությունը նախատեսում է 22 կանտոններում ազգային միություն ձևավորել և «ամեն մեկ նահանգներուն ինքնիշխանութիւնը տկարացնելով՝ մեկ զորավոր ու միացած Հելուետիա [Շվեյցարիա՝ Ֆ. Մ.] մը շինել» [«Եվրոպա», 13.06.1848, 24, 104]:

Կանտոնների երկու երրորդը հավանություն տվեց սահմանադրությանը, որի հիման վրա տեղի ունեցան օրենսդիր մարմնի ընտրություններ: Շվեյցարական լիբերալ ու պահպանողական գործիչները մեծ ջանքեր գործադրեցին երկրի սահմաններն ու ունեցած իշխանությունն ամուր պահելու ուղղությամբ: Չնայած Շվեյցարիայի «հավերժ չեզոքությանը»՝ գերմանական պետությունների հետ սահմանակից կանտոնները դարձան հեղափոխական վտարանդիների ու զինված ջոկատների հավաքատեղի, իսկ շվեյցարիացի 15 հազար վարձկաններ կռվեցին ավստրիական բանակի շարքերում [Революции 1848-1849 гг., 1952, 351]:

«Հայաստանի» լրատվությամբ Ուրի կանտոնի իշխանությունները Սեն Գոթարդ լեռնանցքի վրա մեծ քանակությամբ պահապան զինված զորք են կենտրոնացրել, որպեսզի թույլ չտան Լոմբարդիայից փախչող զինվորների մուտքը երկիր: Դրանից անհանգստացած Լոմբարդիայում ավստրիական զորքերի հրամանատար Կ. Ռադեցկին Շվեյցարիայի համադաշնության նախագահին տեղեկացրել է, որ Տիչինոյից 600 զինված մարդ օգնության է գնացել Ջուզեպպե Գարիբալդուն [«Հայաստան», 02.10.1848, 119; 09.10.1848, 120]:

«Եվրոպայի» դիտարկմամբ ապստամբ իտալացիներին օգնելու կապակցությամբ Շվեյցարիան երկփեղկվել է: Իտալացի ու ֆրանսիացի բնակիչները ցանկանում էին Միլանին ու Վենետիկին օգնության հասնել, սակայն Գերմանիայի սահմանակից շվեյցարացիները չէին ցանկանում օգնել ո՛չ իտալացիներին, ո՛չ էլ ավստրիացիներին: Նրանք ձգտում են «իրենց չեզոքությունը պահել: Ի վերայ այս ամենայնի ազատ գնդերը անդադար Իտալացվոց օգնութեան կվազեն» [«Եվրոպա», 13.06.1848, 24, 104]:

Շվեյցարական իշխանությունների համար չափազանց դժվար էր կանխել գերմանական հեղափոխականների թափանցումը սահմանամերձ կանտոնները, քանզի նրանք ամենուրեք արժանանում էին ջերմ ընդունելության: «Հայաստանի» տեղեկություններով դքսությունում հանրապետականների պարտությունից հետո մեծ թվով ապստամբներ անցան Շվեյցարիա: Դրանից գերմանական պետությունները «սրտերնին շատ նեղացած էին» Շվեյցարիայից, որովհետև այդ երկիրն ապստամբների համար որպես «ժողովարան և խորհրդարան եղած էր»: Այդ պատճառով Պրուսիան, Ավստրիան, Բադենն ու Հեսսենը 30-40 հազար զորք կենտրոնացրին Շվեյցարիայի սահմանի մոտ [«Հայաստան», 23.10.1848, 122]: «Եվրոպան» հավաստի տեղեկություններ էր տալիս Բադենի դքսությունից հեղափոխական շարժման ղեկավարներ Ֆրիդրիխ Հեկկերի, Գուստավ Շտրուվեի, Գեորգ Գերվեգի ապստամբական ջոկատների, ինչպես նաև հազարավոր հեղափոխականների՝ Բազելի կանտոն թափանցելու ու Ֆրիբուրգ մտնելու մասին [«Եվրոպա», 13.06.1848, 24, 104]:

Բադենի դքսությունում գերմանական հեղափոխականները ենթարկվեցին հալածանքների ու իշխանությունների պահանջով լքեցին Շվեյցարիան: Նրանք անբարյացակամ վերաբերմունքի արժանացան նաև Ժնևի կանտոնում, որը գլխավորում էր 1846 թ. Ժնևի կանտոնում հեղաշրջման ղեկավար, «Մարդու իրավունքների ընկերության» նախկին անդամ արմատական Ժան-Ժակ Ֆազին:

Այս իրադարձություններին քաջատեղյակ «Եվրոպան» ու «Հայաստանը» անդրադարձան նաև Ֆրանկֆուրտյան խորհրդարանի ու Շվեյցարիայի կառավարության հարաբերություններին: «Եվրոպան» գրում էր գերմանական կենտրոնական կառավարության ղեկավար Իոհան արքիդքսի՝ պաշտոնական Բեռնին ներկայացրած նոտայի մասին, որը պարտավորվում էր Շվեյցարիայի հետ հաղորդակցությունը վերականգնել միայն այն դեպքում, երբ «դաշնակցութեան կողմեն փոփոխութեան հույս մը տեսնե» [«Եվրոպա», 21.11.1848, 47, 196]:

«Հայաստանը» տպագրեց Շվեյցարիայում գերմանական կենտրոնական կառավարության ներկայացուցիչ Ֆ. Ռավոյի ծանուցագիրը, որը համադաշնությունից երաշխիքներ էր պահանջում գերմանական ապստամբներին այսուհետև Շվեյցարիա մուտք գործելու թույլտվություն չտալու, նրանց հայտնաբերելու, զինաթափելու ու պատժելու մասին: Նա նշում էր, որ եթե Շվեյցարիան դա չանի, ապա գերմանական կառավարությունը պարտավորվում էր ազգային իրավունքները ոտնահարող «խռովարարներուն դեմ զորավոր միջոցներ ի գործ դնել» [«Հայաստան», 06.11.1848, 124]:

Հայ պարբերականները նկատի ունեին Ֆրանկֆուրտյան խորհրդարանի 1848 թ. հոկտեմբերի 4-ի և 23-ի նոտաները, որոնք պահանջում էին Շվեյցարիայի տարածքից վտարել գերմանական հեղափոխականներին ու վտարանդիներին, պատժել այն պետական աստիճանավորներին, որոնց մեղքով սահմանամերձ կանտոններում խռովություններ էին տեղի ունենում: Շվեյցարիան կտրականապես մերժեց այդ մեղադրանքները՝ հայտարարելով, որ «դրանք չեն համապատասխանում իրականությանը և հիմնված են կեղծ լուրերի վրա» [Революции 1848-1849 гг., 1952, 352]:

Շվեյցարական կառավարությունը, իսկապես, ջանում էր իր երկրից վտարել բոլոր հեղափոխականներին: «Եվրոպան» պատմում էր, որ Միութենական ժողովը Դեսսին գավառի ղեկավարությունից պահանջում է իր տարածքից դուրս հանել իտալացի «խռովարարներին»,

որոնք այստեղ էին եկել Լոմբարդիայից: Նույն պայմանը Դեսսինի իշխանությանը ներկայացնում է նաև Շվեյցարիայի սահմանի մոտ կենտրոնացած ավստրիական զորքի հրամանատար գեներալ Վելկեմութը: Դրանից Պիեմոնտի թագավոր Կարլ Ալբերտը խիստ զայրացավ ու սպառնաց Շվեյցարիայի հետ առևտուրը դադարեցնել [«Եվրոպա»,12.12.1848, 50, 207; 06.03.1849, 10, 40]:

Ըստ «Հայաստանի» տեղեկությունների՝ գեներալ Կ. Ռադեցկին Դեսսինի կառավարությունից պահանջել է թույլ չտալ իտալացի ապստամբների մուտքը կանտոն, ձերբակալել ու բանտարկել կանտոնում ապաստան գտած Ջուզեպպե Մացցինիին [«Հայաստան», 22.01.1849, 135]: «Եվրոպան» հայտնում է, որ Շվեյցարիայի Միութենական ժողովը երկար վիճաբանությունից հետո որոշեց օտար երկրներից դուրս բերել շվեյցարական վարձկան զորքերը, որը խանգարում էր երկրի չեզոք կարգավիճակին [«Եվրոպա», 12.06.1849, 24, 97]:

Շվեյցարիայում սահմանադրության ընդունումից հետո ձեռնամուխ եղան իշխանության մարմինների ձևավորմանը: «Եվրոպայի» հավաստի լրատվությամբ Միութենական ժողովը 1848 թ. սեպտեմբերի 14-ին որոշեց բոլոր կանտոններին հրավեր ուղարկել, որպեսզի նրանք ժողովի Վերին ու Ազգային խորհրդի նորընտիր պատգամավորներին Բեռն գործուղեն: Նոյեմբերի 6-ի առավոտյան թնդանոթների համազարկերի ու եկեղեցիների զանգերի ղողանջների տակ հանդիսավորությամբ բացվեցին ժողովի երկու պալատների նիստերը, իսկ երեկոյան Բեռնը տոնականորեն լուսավորվեց: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Օքսենբայնը [«Եվրոպա», 03.10.1848, 40, 170; 21.11.1848, 47, 197; 12.12.1848, 50, 207]:

«Հայաստանը» ներկայացնում էր նոյեմբերի 8-ին Ազգային ժողովում Օքսենբայնի արտասանած ճառը, պատմում Ուրի ու Ունտերվալդեն կանտոններից ընտրված պատգամավոր-ների լիազորությունները ճանաչելու կապակցությամբ ծավալված խորհրդարանական բանավեճի մասին [«Հայաստան», 18.12.1848, 130]: Ազգային ժողովն ի վերջո այս կանտոնների պատգամավորների ընտրությունը չեղյալ հայտարարեց, որովհետև նրանք նոր համադաշնային սահմանադրությունը միայն այն պայմանով էին պատրաստ ընդունել, եթե «իրենց գավառական իրավունքներուն ու կրոնական ազատութիւններուն վնաս մը չի գայ» [«Հայաստան», 08.01.1849, 133]:

Վիեննայի Մխիթարյանների նման Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ «Հայաստանը» նույնպես կարևորում էր շվեյցարական ազգային շարժման մեջ եկեղեցու իրավունքների սահմանափակման խնդիրը: Թերթը պատմում է հոկտեմբերին Ֆրիբուրգ կանտոնի կառավարության կողմից եկեղեցու գործերի միջամտելու մասին, որի դեմ հանդես եկած Լոզանի ու Ժնևի եպիսկոպոս Էդին Մարիլեին իշխանություններն առևանգեցին ու բանտարկեցին Շիլլոն բերդում: Դրա դեմ կանտոնում խռովություն բարձրացավ, որը զորքը ճնշեց [«Հայաստան», 20.11.1848, 126]: Կանտոնի կառավարության որոշմամբ եպիսկոպոսն այսուհետ չպետք է ոտք դներ Լոզան և Ժնև, որտեղ նա «եպիսկոպոսական հեղինակութիւն պիտի չի բանեցնէ» [«Հայաստան», 08.01.1849, 133]:

«Հայաստանն» անդրադառնում էր նաև Ուրի ու Ունտերվալդեն կանտոնների բնակչության մեծամասնություն կազմող հռոմեադավանների բողոքի մասին: Ըստ թերթի՝ նրանք մտավախություն ունեին, որ Ազգային ժողովում բողոքական պատգամավորները կարող էին հռոմեադավանների՝ «կրոնական իրավունքներուն դիպչիլ, ինչպես որ Ֆռիպուրկ գավառի

հռոմեական բնակիչներուն դիպան, եպիսկոպոսին բանտը դնելով» [«Հայաստան», 27.11.1848, 127]: «Հայաստանը» միաժամանակ շարունակում էր լուսաբանել Շվեյցարիայի ու գերմանական Բադենի դքսություն միջև դեռևս առկա հակամարտությունը գերմանացի ապստամբների Շվեյցարիա թափանցելու կապակցությամբ: Թերթը հայտնում էր, որ գերմանական 50 հազար զորքը նոյեմբերի 18-ին մտավ Ցյուրիխի կանտոն [«Հայաստան», 08.01.1849, 133]:

Այս հակամարտությունը շուտով դիվանագիտական ճանապարհով հարթվեց, մանավանդ որ Շվեյցարիան 1849 թ. հունիսին որոշեց բոլոր վարձկան զինվորներին օտար երկրից ետ կանչել: Դրանով Շվեյցարիայում կանտոնային շարժում ավարտվեց:

Եզրակացություն: Արևմտահայ «Արշալույս Արարատյան», «Հայաստան» ու «Եվրոպա» թերթերը եվրոպական մամուլի հրապարակումների և ստացված լուրերի հիման վրա, ընդհանուր առմամբ, հավաստի ներկայացնում են 1840-ական թթ. ազգային շարժման ընթացքը Շվեյցարիայում: Հայ պարբերականներն այդ շարժման մեջ, ի թիվս այլ գործոնների, կարևորում են նաև կրոնական խնդիրը: Վիեննայի կաթոլիկ Մխիթարյանների «Եվրոպան» անթաքույց քննադատում է շվեյցարական կաթոլիկ եկեղեցու ու հոգևորականների դեմ իրականացված բռնությունները: «Հայաստանը» շվեյցարական իրադարձությունների մասին գրում էր «որպես պատմիչ»՝ խուսափելով դրանց գնահատական տալուց: «Արշալույս Արարատյանն» իր դիրքորոշումն արտահայտում էր եվրոպական մամուլի բազմաբնույթ հրապարակումներով, որոնցում երբեմն ճիշտ էր ընկալվում կանտոնային շարժման նպատակը:

Գրականության ցանկ

Galēmk'earean G. 1893, Patmutiwn hay lragrutean, Vienna, Mkhit'arean tparan. [In Armenian]

"Arshaluys araratyan", Zmyurnia, 1847, 19 septemberi, № 294; 31 hoktemberi, № 297; 14 noyemberi, № 298; 28 noyemberi, №299; 12 dektemberi, № 300; 1848, 9 hunvari, № 302; 6 petrvari, № 304; 19 marti, № 307. [In Armenian]

"Europe", Vienna, Mkhit'arean tparan, 1847, 13 hulisi, № 3; 14 septemberi, № 12; 19 hoktemberi, № 17; 28 dektemberi, № 27; 1848, 25 hunvari, № 4; 1 petrvari, № 5; 8 petrvari, № 6; 22 petrvari, № 8; 11 aprili, № 15; 13 hunisi, № 24; 27 hunisi, № 26; 3 hoktemberi, № 40; 21 noyemberi, № 47; 12 dectemberi, № 50; 1849, 6 marti, № 10; 12 hunisi, № 24. [In Armenian]

"Hayastan", Kostandnupolis, 1848, 6 marti, № 89; 27 marti, № 92; 8 mayisi, № 98; 5 hulisi, № 106; 2 hoktemberi, № 119; 9 hoktemberi, № 120; 23 hoktemberi, № 122; 6 noyemberi, № 124; 20 noyemberi, № 126; 27 noyemberi, № 127; 18 dectemberi, № 130; 1849, 8 hunvari, № 133; 22 hunvari, № 135. [In Armenian]

Debidur A. 1995. Diplomaticheskaja istorija Evropy 1814-1878. Perevod s fr. Tom 1, Rostov-na- Donu, Feniks. [In Russian]

Zak L.A. 1966. Monarxi protiv narodov. Moskva. Izd. Mezhdunarognye otnoshenija. [In Russian]

Istorija XIX veka 1938. Pod redakcij Lavissa i Rambo. Perevod s fr. Tom 3, Moskva, Gosudarstvennoe social'no-ekonomicheskoe izdanie. [In Russian]

Revolucii 1848-1849 gg. 1952. Pod redakcij F. V. Potyomkina I A. I. Moloka, Tom 2, Moskva, Izd. Akademii nauk [In Russian]

Folker P. Istorija Shvejcarii. Perevod s nem. Moskva, Izd. Ves' mir. [In Russian]